պետան (վանք) պարսպեցաք, որք կարդայք Ս. Թադ-
աւորին և իւր զաւակացն երկար կեանս խնդրեցէք »։

Արձանագրութեանցն որ'ի մայթս տաճարին Ս. Ցակոբայ,
որպէս յիշէ Հաննա վարդապետ եւ ականատես ծերունի
Հարք, չեղեւ հնար առնուլ զպատճէնս նոցին և դնել 'ի
կարգի Պատմութեանս. զի ծածկեալ են 'ի ներքոյ պատ-
կերաց, յորում յիշատակին ասէ նա ինքն Հաննա թէ՝ որ-
քան ընծայս եռուն և որչափ շինութիւնս արարին թա-
գաւորք և իշխանք Կիլիկիոյ։ Ի սոյն կարգի է և մատուռն
Ս. Ստեփաննոսի 'ի մէջ տաճարին Ս. Ցակոբայ, բաց 'ի
խորանէն Ս. Լուսաւորչին, զոր շինեալ է Գրիգոր շքթա-
յակիր Պատրիարգն 'ի ժամանակի իւրում։

Սոյն այս Լեւոն թագաւոր շինեալ է Ս. Թորոս եկե-
ղեցին 'ի յիշատակ եղբօր իւրոյ Թորոսի, որ անկաւ 'ի պա-
տերազմին Եգիպտացւոց։ Թէպէտ Հաննա վարդապետ
սխալմամբ դնէ զթուական շինութեան եկեղեցւոյն ՊԼԵ.
(1386) փոխանակ դնելոյ ՉԼԵ. (1286), որպէս գրեցաք
'ի վեր անդր. զի 'ի նմին թուականի կործանեալ էր թա-
գաւորութիւնն Կիլիկիոյ և Լեւոն Ե. մեկնեալ յԵւրոպա։
Գրէ նաեւ հայր Ալիշան թէ, Լեւոն յետ ազատութեան 'ի
գերութենէ իւրմէ գնաց յԵրուսաղէմ իւրովքն եւ մնաց
անդ երկար ժամանակ շրջելով 'ի Ս. Տեղիս, և մեռաւ անդ
Թորոս անուն որդի նորին, եւ թէ շինեաց եկեղեցի 'ի
հիւսիսոյ կողմն տաճարին Ս. Ցակոբայ, և 'ի յիշատակ որ-
դւոյն անուանեաց Ս. Թորոս։ Ցուշկ. Հայ. Բ. Երեւ. 518։
Սակայն բովանդակ տոհմային Պատմագիրք վկայեն թէ.
Լեւոն յետ դարձին 'ի գերութենէ չունէր արու զաւակ,
և եկեղեցին այն արդէն կանգնեալ էր անդ, և չէր հնար
գերեալ և յամենայն փառաց մերկացեալ թագաւորի կան-
գնել զայնպիսի եկեղեցի։ Նա երբէք չկարաց հանդիպիլ
յԵրուսաղէմ, զի ղերծեալ 'ի բանտէն Եգիպտոսի, դիմեաց
յԵւրոպա։

Ռէքին Էտտին Պիպարս Փնտուգտար Մէմլուք, Սալէ-
հեան Փնտուգտար կոչեցեալ յԱրաբացւոց, եկաց Սուլթան
Եգիպտական հարստութեան 'ի թուին հիճրէթի ՆԾՂ
(1258) եւ 'ի հինգերորդ ամի իշխանութեան իւրոյ, արձակեաց զզօրս իւր 'ի Պաղեստին. աւարի առին զայնոսիկ